



Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 50

ՏՈՒՆԱԲԱՐ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍՏԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղալ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումացոյցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի Բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

آ. آسادوریان) شرکت مرتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Այի Հասսէսի Թիւ 52



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց ահա կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենա մը անմիջապէս անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ սաղարթի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՆ ԿԱՅԾ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է. ոոյն մեքենան ամենէն կատարի լազործուածը, հաստատուածը եւ դիւրագործելիքն ըլլալուն բովանդակ աշխարհի

Քչը՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախվին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՅԱՆՈՒՄԱՆԱԳՐԱՆԵՆ

ԲՆՐԱ

- (1. Մեծ Լպոյ, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալանիա Սերայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւրքի կոտեւը.
- (2. Զարաքէյ, Թրամբլէի կայարանին դէմ.

ՊԱԼԱՏ

- (1. Սուլթան հալամ .
- (2. Սուլթան Պէյազետ, Թիւ 13-ի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԵՆՏԱՐ

Զարը Պոյու, (Թիւ 12).

Կապարեալ Երաշխատուորսին

Մասնանկղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԳ. ԱԿԱՆԶԱԾԵՆՈՐԸՆԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադրուած 1860 թ. Կ. Պ. Ե. Ն. Ա.

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

ՋԻՒՂ ԵՐԵՎԱՆ

Երանագործի եւ Պանեւսի գործարարի զբաղմունքով զբաղող ընկերութիւնը, որի նպատակն է զարգացնել եւ արտադրել զանազան տեսակի շինարարական նիւթեր, ինչպէս նաեւ զանազան տեսակի շինարարական նիւթեր, ինչպէս նաեւ զանազան տեսակի շինարարական նիւթեր:

31,008,000 ԴՐԱՄ

7,000,000 ԴՐԱՄ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակի շինարարական նիւթեր, ինչպէս նաեւ զանազան տեսակի շինարարական նիւթեր, ինչպէս նաեւ զանազան տեսակի շինարարական նիւթեր:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակի ապահովագրութիւնը մարդկանին կեանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակի ապրանք՝ շոգե-նաւի եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատակն է ԲԵՏԻԼԻՍԷՆԻ ԸՆԴՀԱՆՈՐ. գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեքանդր խան, թիւ 11-16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառի պարտաւոր ներկայացուցիչներ:

Լիազոր ներկայացուցիչ Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 50

ԶԱԲԱԹ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Օրուան յուրեր. — ՊԻՂԱՏՈՍ ՊՈՆՏՈՍԵԱՆ: Բանաստեղծն էր իր երգ (Բերքուած): Բերան, Բերացին, Բերացունիկն. — ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ: Ժամանցը. — ԼԵՒՈՆ ԱԻԱԳԵԱՆ: Միսիսն աշափռանկա է (ձիւնաբեր յօղուած) — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: Երկու խօսք (Յ. Սրփիարիկ) — Ս. ԵՐԿԱՆԵԱՆ: Լուսանկարդ (քանաստեղծութիւն). — ՍՈԿՐԱՏ ՍԱՐՐԱՅԵԱՆ: Աշխարհի մեջ: Զարթուան յուրեր:

ՕՐՈՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Տրապիզոնի Առաջնորդարանի վարչական ժողովն ընտրուեցաւ, որուն Ատենապետն է՝ Ն. Շահ. վարժարանի նախկին ժառանգաւոր սաներէն, ու տեղւոյս առեւտրական մարդոց դասէն՝ Սահակ էֆ. Էթմէքճեան:

Իրենց առաջին գործն եղաւ վարժարանաց բարեկարգութիւնը, սա մեծ մտածումով թէ՛ իմացական, յառաջդիմութիւն վարժարանով կ'սկսի, և անով կ'լինայ ամէն ժողովրդոց բարեկեցութիւնը: Ուստի միաձայնութեամբ վարժարանին Տեսուչ և ուսուցչապետ ընտրեցին՝ Ազն. Միհրան էֆ. Յովհաննէսեան, որ Հայ Բողոքականաց Ազգապետարանին վարչական ժողովոյ անդամ ու Պոլսոյ Հայ Բողոքական հասարակութեան պաշտօնական ներկայացուցիչն է Թէլֆէյ-եան Յովհաննէս էֆէնտիին հետ, ինչպէս որ Պաշտասարեան Գրիգոր Վերապատուելին՝ 1906ի հանրագիտական Համադգային նոր Օրացոյցին 118րդ երեսին մէջ, Ազգապետարանի Վարչական ժողով վերնագրած պաշտօնական բաժնին մէջ նշանակած է:

Տրապիզոնի հայոց Առաջնորդարանի վարչական ժողովը՝ Պոլսոյ Հայ Բողոքականաց Ազգապետարանի վարչական ժողովոյն մէկ ընտիր անդամը՝ հա-

յագէտ ու լեզուագէտ Յովհաննէսեան Միհրան էֆէնտի, Տրապիզոնի Հայոց վարժարանին Տնօրէն կարգելով՝ աղատած եղաւ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին Ուսումն. Խորհուրդը Տնօրէն-ուսուցիչ մը ճարելու երկար բարակ յող-նութիւններէն : Թէեւ երկսեռ վարժարանաց Տնօրէն մը ամուսնացած ու զաւակաց տէր ըլլալը կրթական ու բանական պատշաճութիւններէն մին է , սակայն Ազգապետարանի Մայրաքաղաքի Հայ Բողոքական Ժողովուրդին վարչական ներկայացուցիչ էֆէնտիին ամուրի վիճակը արգելք մը չէ անոր ընտրութեանը , քանի որ կարող Տնօրէնի մը բոլոր յատկութիւններովն օժտուած է Միհրան էֆ. Յովհաննէսեան : Եւ արդէն Ազգապետարանի վարչական Ժողովոյ անդամակցութիւնը ամէն քննադատութենէ վեր է՝ թէ վարելու կարողութիւնը պաշտօնապէս ու գործնականապէս ապացուցուած է, որով ոչ նուազ նոր օժանդակութիւն մը կ'ըլլայ նաեւ մեր վարչական Ժողովին ընելիք բոլոր գործառնութեանց : Նոյնպէս աղջկանց համար ալ հայագէտ ու լեզուագէտ , ձեռարուեստագէտ թէ մանկավարժագէտ ուսուցչուհի մը ապսպրուած է , նորընտիր Տնօրէն էֆէնտիին և յատուկ հրահանգով պատուիրուած է իրեն որ Սկիւտարի Հոմ-Սգուլի այս տարուան փայլուն ու իմաստուն չընաւարտուհիներէն մին սակարկէ. և իրեն հետ միասին շոգեպինդ հապճեպով քաղաքս բերէ , երկուքին ամսական թոշակ 20 ոսկի որոշուած է , զոր երկուքն իրենց մէջ պիտի բաժնեն պատշաճագոյն համեմատութեամբ , կրթական գործին սիրոյն համար՝ վեր վար համաձայնելով իրարու հետ այսքան ամսական գումարով մը : Մտադրութիւն կայ նաեւ՝ ամէն ջանք ի գործ դնել կրօնագիտութեան համար ալ՝ այստեղի Աստուածաբանութեան քաջահմուտ կարող և անուանի վարդապետ մը ուսուցիչ կարգել : Հետեւապէս մեր դաւառական նորընտիր Վարչ. Ժողովն՝ այս մասին. Պոլսոյ Կրօն. Ժողովն ալ մեծ մտատանջութենէ մը փրկած կ'ըլլայ : Այլեւս անցած է այն ժամանակը , ուր լուսահոգի Եղիազար Մուրադեան՝ գրողգիտութեան ու պատմութեան նշանաւոր ուսուցիչ, բողոքեց. հրապարակաւ Յովհաննէսեան Միհրան էֆէնտին Բերայի Ս. Երրորդութեան Հայոց վարժարանին Տեսուչ կարգուելուն , դէմ ու հրաժարեցուց պաշտօնէն : 20րդ դարը գիտութեան դարն է , որ կրօնական բոլոր նախապաշարումները ու դաւանաբանական բոլոր խտրողութիւններ աւլած է , դուրս նետած է գպրոցներէն թէ եկեղեցիներէն : Մենք ինչպէս Հայ Բողոքականաց ու Հռովմէականաց դպրոցներու մէջ կ'դասախօսենք արձակ համարձակ , նոյնպէս անոնք ալ մեր վարժարաններուն մէջ ազատ են դասախօսելու : Ի՞նչ փոյթ , պէտք է խօստովանիլ թէ՛ անձը չէ որ պիտի ընտուռի , այլ անոր ուսումն և հմտութիւնը դասախօսութեան մէջ , հերիք է որ մեր տղայոց ու աղջիկներու մայրենի լեզուով կրթութիւն ու գիտութիւն պիտի սորուեցնէ :

ՊԻՂԱՏՈՍ ՊՈՆՏՈՍԵԱՆ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն

Ե Բ

Ե Բ Ե Բ Գ

Առ, մեկհատիկն ԱՆՈՅԾ

Ա Շ Ո Ւ Ն

Գոհարվարդ այսերդ՝ անթառան Եղեմ,
Ծաղիկ ծիծաղներս հոն սերդ արեգդեմ,
Զի՞ փոյր քե, Ան՝յշ, իսրաւեր աշուն
Թօշնե ծաղիկներ զարունին նախշուն:

Թե, ծիծառ՝ մեր քիւ, սոխակ՝ վարդենին,
Թողուց որ գայ հոն լա՛յ աշնան փամին.
Մուշկ շունչդ՝ հոն զեփիւռ, ձայնդ հոն դեղձանիկ
Երգե, երգն հազնի՛ սփոփն երջանիկ:

Թե, աշնան անպեր քուխ պատեն երկին,
Թուխ ֆողեն երկիրն որպէս այրի կին,
Նշոյ՛ք բոց սիրոյդ կեանքիս աշխարհքին
Պայծառ յոյսերու արեւներ ծագին:

Թե, աշնան հովեր քափե՛ն սերեւներ,
Իբր օրեր՝ կեանքին, Ան՝յշ, հոգ մ՛ըներ.
Յաւերժաժողիկ զարն՝ունն է մեր սեր
Ա՛ն սերեւաքափ երբե՛ք չե՛ սեւեր:

Թե, աշունն ունի հեղեղներ սասիկ,
Որ ֆշեն սանին հիւղերն հանդարտիկ,
Քոյդ ծոց սիրական տն՛ւնս է ապահով.
Զի՛ փլջիր ո՛րքան կասղած փշե հով:

Թե, մառախլապատ դեմքն է աշունին,
Յօնքն անպրոպայնոյն սոնք ակնարկն ունին,
Ցայտե մերք աչքն պայծառ մառապայր,
Ու մերք քօքաիկ շանքեր բարկաճայր:

Փոփոխ բնութեանն է ան պարզ երեւոյթ,
Տասանելն ա՛նմարք՝ մեր սեր սարաւոյթ,
Արցունքս աշունն հոն չ՛ունի կայլակ,
Իր կայծակն՝ հոն կայծ, իսկ փայլդ՝ հոն փայլակ:

Աշունն է պատկեր ի՛նչ խորհրդաւոր
Բխրդեմք, բխրոգի մարդուն անցաւոր,
Գարուն մը ծաղիկ, անառ՝ մ՛աշ արեւ,
Մահն՝ աշուն, քափե՛ հեգ կեանքին սերեւ:

Թօն, շանքն, անպն, հով, պաղն ու դոյ խեռ աշնան
Սուրբշունչ, սերս սիրոյդ բիւր հրապոյրք դառնան,
Աշունն է զարուն ֆեւ, չ՛նա՛ղդ Անուշ.
Փա՛նք ծաղիկն ֆեւ եւ յանրին իսկ անշուշ:

ՆՇԱՆ — ՊԱՊԻԿԵԱՆ *sauvegarde*, որ հրապարակ եղաւ, եւ որուն անբողոքեան մասին գրած էինք մեր նախորդ քիւերուն մէջ, այս անգամ զաղափար մը տալու համար մեր ընթերցողներուն, անոր պարունակութեան, ճշտակին եւ բովանդակութեան մասին, ի ստորեւ կը դնենք Ե. Թօրայեանի մէկ գրութիւնը, որուն մէջ օրումն երգիծաբանը ըստ կարողութեան ջանացած է սրտաւիտ զարմանաժներով պատկերել՝

ԲԵՐԱՆ

ԲԵՐԱՑԻՆ

ԲԵՐԱՑՈՒՀԻՆ

(ՖԱՆԹԷԶԻ)

Եթէ աշխարհիս երեսը կայ բան մը, զոր տա՛սը մատուցներուս վրայ գիտեմ, հիմնովին կը ճանչնամ եւ արմատովին ուսումնասիրած եմ, ատ ալ, ո՛չ Ֆրանսէիքներն սեկսաֆու է, ո՛չ հայերէնի քերականութիւնըս, ո՛չ Պոլսոյ հայեւաբան (գրեց՝ Թէոդիկ), ո՛չ գաւառի գաւառաբարբառը (գրեց՝ ամէն գաւառացի), ո՛չ նշանածիս հոգեբանութիւնը, ո՛չ Այվազեանի գրականութիւնը եւ ո՛չ գրականութեան ... Այվազեանը, այլ մի՛ միայն ... Բերան, Բերացին ու Բերացուն հին (տես վերնագիրս)։

Ծանիր զքեզ, ըսած է կարծեմ պատմական մեծ շատախօսը՝ Սոկրատ՝ որ խօսքը մէջերնիս. եթէ մեր օրերը ծնելու ըլլար, փոխանակ պատմութեան էջերուն մէջ մտնելու ... Ազգ. Հիւանդանոցը կը մըտնէր չիտակ։

Միմիայն անոր ըսածին հակառակը գործած ըլլալու անմեղ հաճոյքը վայելելու համար, ներեցէք սակայն ըսեմ թէ՛ Բերայի մայթերը, Բերայի գարեջրատունները, Բերայի թատրոնները, Բերայի երգչուհիները, Բերայի թոթոքոզները, վերջապէս *tout-Péra*-ն կը ճանչնամ այնչա՛փ աղեկ, որչա՛փ ... չեմ ճանչնար ինքզինքս, եւ շա՛տ աւելի դիւրութեամբ պիտի կրնայի ըսել թէ՛ այսինչ տիկինը այս գիշեր ո՛ւր պիտի պառկի, քան թէ այս իրիկուն ... ես ո՛ւր պիտի պառկիմ։

Բերայի մայթերուն վրայ, երբ յիսուն քայլ հեռուէն հանդիպիմ մէկու մը — արական կամ իգական՝ խնդիր չէ — կրնամ վայրկեանին մասնաւոր տեղեկութեանց գործակալութենէ մը աւելի գոհացուցիչ կերպով պատմել ձեզի թէ՛ չազար ութը հարիւր քանիի՞ն ծնած է, ե՞րբ կարգուած է կամ պիտի կարգուի, քանի՞ սիրահար ունի՞ կամ սիրուհի, կնիկէն գո՞հ է թէ ոչ, քանի տեսակ լաթ ունի ու քանի՞ փողկապ, վերջին անգամ ե՞րբ կոշիկ առաւ եւ ե՞րբ իր տիկինը խաբեց (խաբել բառը իր վիպական նշանակութեամբ), եւ վերջապէս բոլոր այն չնչին ու աննշան մանրամասնութիւնները զորս աշխարհիս բոլոր զոքանչները ու կեսուրները հոգի կուտան հասկնալու՝ իրենց զաւակը մէկու մը հետ կարգելէ առաջ։

Արդէն, ըսէք, եթէ երբէք, Սոկրատին խաթրը չի կոտորելու համար ինքզինքս ճանչնայի, ի՞նչ օգուտ պիտի ունենար։ Ապահովաբար — այն ատեն, տեղն ի տեղօք պիտի հասկնայի, անունս, մականունս, հասցէս, միտքիս վիճակը, քսակիս մակարդակը, եւ *à coup sûr*, շատ գէշ գաղափար մը պիտի կազմէի իմ մասիս։ Մինչդեռ հիմա, փոխանակ ինքզինքս ճանչնալու, ձեզ կը ճանչնամ եւ եթէ միտքս գէշ գաղափար մը կազմելու, այդ գէշ գաղափարը ... ձեր մասին կը կազմեմ։

... Միտքս ուղղակի նիւթիս գալ էր՝ սակայն, որովհետեւ, ինչպէս կ'ըսեն, « ուղեւը ուրիշ բան է, ընելը ուրիշ », հիմա հոս կիցիր ... սրամտութիւն կը քշեմ կոր ձեզի։ Երեւակայած էի թէ քանի որ այս անգամ, երբ, կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով, պիտի գրեմ նիւթի մը վրայ, զոր բացառաբար գիտեմ հիմնովին, բառերը ու փոխառները պիտի ներկայանային գրչիս, առանց առաջուց ... մասնաւոր հրաւիրագրի սպասելու։

Գրիչս մատներուս մէջ կաղմ ու պատռաստ, կը ջանամ օգին մէջէն թռչող գաղափարները բռնել, սակայն, չեմ յաջողիր բռնել նոյն իսկ ... ճանձ մը, լոկ այն պատճառաւ որ ... ճանձերու սեյօնին մէջ չենք գտնուիր։

Ահա թէ մարդ ինչո՞ւ ... իր գիտցած բանին վրայ չի կրնար գրել երբէք։

... Բարի տղայ մըն եմ սակայն, եւ բարի տղան խիղճիս չա՛տ ծանր պիտի գար յուսախաբ ընել Բերան, Բերացին ու Բերացուհին, որոնք պատրաստուած էին իրենց վրայ գրելիքներս կարդալու եւ . . . բարկանալու:

Եւ, որովհետեւ, գիտեմ որ՝ բարկութիւնը եթէ չպոռթկայ, սաստիկ գլխու ցաւ մը կը պատճառէ մարդուս, կամայ ակամայ կը փորձուիմ գրել Ֆանթէզիս, որ աւելի . . . առողջապահական նպատակ մը ունի հիմա:

Ահա եթէ կուզէք, յառաջապանը յօդուածիս, զոր ուրիշներ պիտի անուանէին «նախաբան», կամ «երկու խօսք», կամ «ընթերցողին» կամ «մեր նպատակը» եւ կամ «առաջադրութիւն», եւ որ հակառակ իր անուններու փոփոխութեան, չի փոխուիր երբէք եւ միշտ կը մնայ ա՛յնչափ աւելորդաբան մը, որչափ նոյնինքն յառաջաբանին յետագոյն:

Ծանօթութիւն. — Ընթերցողներէս աւելի երկինքին մօտ գետեղուած, բնակիչներուն մեծ մասը երկինքէն հեռու մնացած է:

* * *

Բերան իր աշխարհագրական դիրքովը աւելի երկինքին մօտ գետեղուած, բնակիչներուն մեծ մասը երկինքէն հեռու մնացած է:

Բերայի համար կ'ըսեն թէ Բարիզի փոքրանկարն է: Բ՛րա ու Բարիզ իրարմէ կը տարբերին միայն տա՛կէտով թէ Périasienn Parisien չէ եւ ոչ ալ Parisien Périasienn, ինչպէ՛ս ըսած է ա՛յնչափ ճիշդ կերպով . . .

Պ. տը Լափալիս:

Բերա բնակիլը հայ-լայֆութիւն կը նշանակէ, քանի որ հարուստ մը պարտաւոր է օգտփոխութեան համար վեց ամիս Բրիւքլէօ բնակիլ, վեց ամիս Բերա, եւ տարուան մնացած մասը . . . իր ուզած տեղը:

Բերացին իր Բերացիութեամբ այնչափ չը պարծենայ որչափ չպիտի պարծենար աղքատ կին մը իր հարուստ սիրահարով:

— Բերտցի եմ, կ'ըսէ սանկ շեշտով մը

ինչպէս Սպանիացի մը իր մեծանունն նախնիքներուն տիտղոսները պիտի թուէր:

Բերացի ըլլալը քանի մը հազար ոսկիի տէր ըլլալու պէս բան մըն է, որով կը յանձնարարեմ բարեկամներուս որ եթէ կը փափաքին քանի մը հազար ոսկի ունենալու պատրանքը ունենալ, երթան շիտակ Բերացի ըլլան:

Բերայի մէջ մարդիկ քալած ատեննին երբէք գետին չեն նայիր, կորսուած դրամապանակ մը գտնելու յոյսով, որովհետեւ դրամապանակ մը կորսնցնելու համար, ամենէն առաջ պէտք է . . . դրամապանակ մը ունենալ, սակայն ամէն Բերացուհի փողոցը քալած ատենը չարունակ չորս զին կը նայի գտնելու համար էրիկ մը, զոր . . . չի գտներ, քանի որ, ոչ ոք կորսնցուցած է ատանկ լրան մը:

Բերացուհի մը էրիկ մը գտնելու համար ոսկի պարտանակող քսակ մը գտնելէն աւելի դժուար է:

Բերացուհիս հինգշաբթի օրերը Ղալաթիոյ ժամը կերթայ, Բերացին ալ նոյն օրը նոյն ժամը կերթայ: Ու կը կարծեք թէ կ'աղօթե՞ն: Քաւ լիցի: Այլ քանի մը ժամ, իրարու երես կը նային, որովհետեւ . . . աղօթելու դարավերջիկ եղանակն է այս: Աղջիկները կը յուսան լուրջ նշանած մը գտնել որ իրենց հետ կարգուի, այրերն ալ իրենց կողմին կը յուսան թեթեւ սիրուհի մը գտնել որոնց հետ չկարգուին, եւ այս կերպով ո՛չ աս բան մը գտնէ, ոչ ալ միւսը:

Բերացուհին կիրակի օր ժամ կ'երթայ հասկնալու համար թէ նոր շինած զգեստը իրեն վաղե՞ր է, եւ այս կը հասկնայ այն ատեն միայն, երբ ճամբան մէկ քանի հոգի . . . հարժ նետեն իրեն:

Բերացի մայրը դատապարտուած է իր աղջիկը վեր վար պտըտցնել Աստուծուն իրինկունը, քանի մը ժամ շարունակ, միշտ ի խնդիր սիրահարի մը որ յանկարծ խենդերու պէս սիրահարուի իր աղջկան: Բայց կ'երեւի թէ այս մտային հիւանդութեան ալ մօտան անցած է, քանի որ այնչափ նուազած է . . . կարգուողներու թիւը:

Բերացին, շատ մը գուռառներու օրինակով՝ ա՛յնչափ աղեկ ուսումնասիրած է պըզ՝

տիկ պղտիկ կարգուելու հակառողջապահական անպատեհութիւնները, որ երբ կարգուի, փեսան առնուազն ... քառասուն է, իսկ հարսը՝ եռեսունը հինգ, որով Բերայի մէջ աղուոր աղջիկ մը իր տգեղնալուն պէտք է սպասէ զինքը առնող մը գտնելու համար:

Սկիւտարցին, Գում-գաբուցին եւ Սամաթիացին կ'երեւակայէ թէ՛ օ՛հ, Բերացին որչա՛փ կը զուարճանայ, սակայն մարդ Բերացի ըլլալու է, կարենալ հասկնալու համար թէ հոն մարդ ինտո՞ր կը բարձրանայ:

Բերացուհին գերագոյն զբօսանքն է իրիկուան դէմ Թօգաթլեանին երթալ եւ խոնարհել. — Կը յօրանջեմ, կը յօրանջես, կը յօրանջէ ...:

Բերայի մէջ ամէն մարդ ամէն մարդու վրայ կը զարմանայ, թէ ինչպէս գործին մէջէն կ'ելլէ կոր: Ճշմարտութիւնը այն է որ սակայն Բերայի մէջ ամէն մարդ ամէն օր սնանկանալու վրայ է եւ չի սնանկանար:

Բերայի մէջ անլուծելի խնդիրներ են. Խնտոր սա կինը, որուն էրիկը չորս ոսկի ամսական կ'առնէ, հինգ ոսկինոց գլխարկ կը դնէ: Սա մարդը որ պարզ տոմարակալ մըն է, ինտո՞ր կ'ըլլայ որ երկու տարուան մէջ երկու աբարդուման կը չինէ:

Բերայի մէջ Փէմինիզմը ա՛յնչափ առաջ գացած է, որ կամաց կամաց ալ միայն աղջիկները կ'աշխատին: Էրիկմարդիկ իրիկուան դէմ իրենց խանութները կը գոցեն, մինչդեռ մինչեւ գիշերը ուշ ատեն կը հանդիպինք կարուհիներու, որոնք աշխատութենէ կը վերադառնան, իրենց էրիկները գործածելով ... իբր տնտես:

Բերայի մէջ ամէն մարդ կը յաւակնի զրականութենէ ու թատրոնէ հասկնալ, եւ ոչ մէկը բան կը հասկնայ ու կ'երեւայ թէ կլիման է որ այսպէս կը բերէ:

Բերացին մէկ օթեակին հինգ ոսկի տալով՝ Սառային մէկ խաղին կ'երթայ եւ բան մը չի հասկնար, եւ երեք մէճիտ չի տար երթալու համար Մնակեանին, ուրկէ բան մը կը հասկնայ: Եւ թերեւս այսպէս ընելուն իրաւունք ալ ունի, ինչպէս կ'ուզէ որ ելլէ դրամ տայ բանի մը զոր ... կը հասկընայ:

Բերացուհին այնչափ վայելչատէր է որ,

նոր շրջագետս մը չինելու համար ... խոհանոցին քենճիրեն կը ծախէ:

Բերացուհին այնչափ սրամիտ է, որ երբ փողոցը սիրուն զօնքիման մը ընէք անոր, անմիջապէս կը պատասխանէ ձեզի.

— Կորսուէ՛ սըկէց, ես քու վրադ չեմ թուքներ:

Պարկեշտութեան համար, պարկեշտ է: Բերացուհին, եթէ չէք հաւատար ինծի, պանդոկատէրերուն հարցուցէք:

Իր էրիկը այնչափ կը սիրէ որ, իր արդուլարդի ծախքերուն համար՝ անոր բեռ մը չըլլալու համար, առանց միտքէն գէշ անցնելու ... կը խարէ զոյն:

Բերայի մէջ ամէն մարդ վիզը գոլալը օձիք ունի եւ կռնակը՝ քանի մը հարիւր ոսկի պարտք: Պարտք ունենալը Բերացուհիին գերագոյն յատկանիշն է, եւ ճշմարտ Բերացիի մը համար անվայել բան մըն է ... պարտքերը մաքրել:

Բերայի մէջ հացավաճառները, մսավաճառները եւ նպարավաճառները մեծ խնամք կը տանին իրենց յաճախորդներուն առողջութեանը, միշտ դողալով որ չելլեն մեռնին, որովհետեւ ամէն ալ քանի մը տասնեակ ոսկիներ առնելիք ունին միշտ: Այս պատճառաւ, երբ Բերայի մէջ մէկը հիւանդ պառկի, բոլոր պարտապահանջները իրենց կողմէ մէյմէկ բժիշկ կը ղրկեն հիւանդին:

Բերացուհին իր սիրահարներուն սիրտին վրայ patinage ըրած տտենը, երբեմն կը սասհի ու ... կ'իյնայ, բայց օհ ! n'insulez jamais une femme qui tombe ! կ'ընէ Հիւկօ:

Բերացին, տարին անգամ մը Եւրոպական երաժշտութիւն կ'ուսնիդէ, Ազգ. Հիւանդանոցի տարեկան Նուագահանդէսին, ուրկէ ոչինչ համ կ'առնէ:

Բերացին երբ ուզէ սիրաբանել, Բանկալթի կ'ելլէ, երբ փափաքի սիրել ... Բերա կը մնայ, իսկ երբ անձնասպան ըլլալու չափ յուսահատի, Ղալաթիոյ քարափը կ'երթայ ... սուրճ մը կը խմէ:

Բերացուհին չի սիրահարուիր, բայց երբ սիրահարուի, խենդերու պէս կը սիրէ կամ ժամուն տիրացուն եւ կամ մանիֆաթուրածի մը գրագիրը, որովհետեւ շատ աղէկ գիտէ թէ՛ tous les goût sont dans la nature !

Բերացուհին շատ կը սիրէ պարծենալ իր չունեցած բաներովը, ու ասոր համար է որ գուցէ գորսածը քուրջով կը լեցնէ:

Բերացուհին դպրոց գացած ասենք տասնի չափ ուսուցիչ կ'ունենայ եւ նոյնչափ ալ ... պաշտող, որոնք մէկտեղ կ'աշխատին անոր դարգացման, մէյ մըն ալ կը գանգազատինք թէ մեր աղջկները բան չեն սովորիր:

Ամէն Բերացի չիրնար արարդրմանի տէր ըլլալ, ինքզինքը միտթարեւու համար, գունէ ... արարդրման օձիքներ կը դնէ:

Բերացին աղջկան մը conquête ընելու համար երբէք սերեկնաւ չ'երգէր անոր պատըշգամին տակ, poi de nuit մը պարունակութիւնը գլխուն ստանալու պատիւին չ'ենթարկելու համար ինքզինքը, այլ երբ որոշէ ամէնէն անմատչելի օրիորդին séduction ընել, carrement կ'երթայ ու կ'ըսէ.

— Քեզի հետ պիտի կարգուիմ:

Այս միջոցը ամենէն դիւրինն է եւ Բերացի աղջկան ... «Ouvre toi sésame»:

Բերացին երբէք ամուսնալուծման չի դիմեր, մտածելով թէ ետքէն ամէն մարդ ինչ կ'ըսէ:

Բերացին կը ձգէ որ կինը ուզածը ընէ, կինն ալ կը ձգէ որ էրկը ուզածը ընէ ու et tout va bien dans le meilleur des mondes!

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

Խ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԻ ԴԱՍԱՏՈՒ

Ներկայ ձմեռնամուտի առթիւ ընտանեկան երեկոյթներու անհրաժեշտ պարը քիչ ժամանակուան մէջ ուսանելու փափաքողը կրնան դիմել իրենց Բերա, ԿալաթաՍէրայի դէմ Սիթէ տը Բերայի մէջ թիւ 11. Պոլսոյ կողմ Մեծ Ծուկայ, Գալթաքճըլարի դուռը, Փէսճի Սեպուհ աղայի խանութը:



ԺԱՄԱՆՑԸ

Ժամանցի խնդիրը այն հարցերէն է ինքնին, որոնք իրենց բարդ ու կնճաղից հանգամանքովը չա՛տ ջուր կը վերցնեն, ինչպէս սովորութիւն է ըսել ժողովրդային լեզուով:

Ի՞նչպէս կարելի է ընել ժամանց մը, սիրուն, անմեղ ու հաճոյալի ժամանց մը, որ ըլլա՛յ մի եւ նոյն ատեն ալ պատուաւոր, առանց ո՛ր եւ է անախորժ հետեւութիւններու միջոց հանդիսանալու:

Բայց այս հարցումները քիչ մը անհարկի ու աւելորդ պիտի չ'ըլլա՞ն արդեօք մեզի համար, եւ մասնաւորապէս մեր այն դասակարգին համար, որ ուրիշ ամէն բանէ աւելի գիտէ վայելել ու ըմբոշխնել ժամանցին բազմակողմանի հաճոյութիւնները, առանց այդ մասին ո՛ր եւ է մէկէն խրատ առնելու պէտք ունենալու, այնպէս չէ՞:

Երեւակայեցէ՛ք, մարդիկ կան մեր մէջ, եւ սանկ շնորհքով ու քիչ մըն ալ ճանչցուած անձեր, որոնք առաւօտուն կանուխ՝ տակաւին նո՛ր իրենց գրադուսին գլուխը անցած՝ կը պայմանաւորուին իրարու հետ, իրիկունը կանուխէկ մէկտեղուելով հաճոյալի ժամանց մը վայելելու հաստատ մտադրութեամբ:

Չուհաճի խանին բարի ծաղիկ աշկերտները կը պօռան մէկզմէկու այնքան անախորժ ու տարօրինակ ձայնով մը՝ որ պիտի գզուեցնէր ամենէն վարդն իսկ:

— Ծօ՛, Միրի՛կ, իրիկունը մեզի եկուր տէ մէկտեղ Իսթիւրյին երթանք...

Եւ իրր ճշմարիտ խոստմնապահներ, իրիկունը մէկտեղ ալ կ'իջնեն ուղղակի ժամադրաւայրը, ու կը խմեն, անվերջ, անհատնում սրուակներու տեղափոխումները արագաբար իրարու կը յաջորդեն, ու կը խմեն տակաւին, հակադրականներուն խրդ մը ընելու համար կարծե՛ս, առանց գիտնալու անշուշտ թէ՛ ի՞նչ սուրաք պիտի ընէին մեծայարգ ալքողատեացը՝ եթէ նոյն պահուն ծակէ մը գաղտագողի դիտէր զիրենք՝ իրենց այդ ճնկեղաբանութեան մէջ:

Եւ տակաւին կան անդին ուրիշ չա՛տ մը մարդիկներ ալ, որոնք նոյնքան գերազանց

են իրենց նախընտրութիւններուն մէջ, Կան, օրինակի համար, վարդապետներ՝ եւ թե-րեւս որբագան (°) անձնաւորութիւններ ալ, որոնք ամէն ատեն եւ շարունակաբար՝ հար-սանեկան հանդիսութիւններու մէջ ըլլալ կ'երազեն, տիկիներու եւ օրիորդներու թոհուրոհին մէջ յաղմելու համար փառա-ւորապէս իրենց տեղերը, իրր պարզ ու նե-րելի (°) ժամանց:

Թաղական խորհրդոց գանձապետներու իրենց պարապ եղած ատեն շարունակ գա-նային յատակը կը խառնշուկեն, առաջուց գիտնալու համար թէ՛ մօտեցած է իրենց հաշուեյարդարութեան ժամանակը... Տնտես, Խորհուրդին հետ, եւ եթէ բոլորովին զբա-ղում չ'ունենան, այն ատեն ալ հաւերու եւ վառեակներու հետ ժամանակ կ'անցնեն... եկեղեցիին բակին մէջ:

Խմբագրապետները իրենց պարապ ժա-մերուն կլկլակը առջեւին դրած շարունակ բաժանորդներու տետրակները կը թղթա-տեն, մտածելով մի եւ նոյն ատեն ալ թէ՛ ինչպէս եւ ինչ միջոցներով կրնան բաժնե-գին մը կորզել թեփալճառ եւ կամ գա-մալճառ միոմն Մարկոս Կնմիէ, հոգ չէ՛ թէ միւս կողմանէ ան՝ իր կծծիութեամբը եւ կամ ուրիշ հաշիւներով մերժէ իրենց այդ առաջարկը:

Կան տակաւին դրագէտներ ալ, որոնք մտադիր են իրենց տրամադրելի ժամանակ-ներուն մէջ, այս անգամ ալ ի նպաստ աւ-քողմուրութեան յօդուածներ քել, յուսու-լով որ իրենց այդ չնչին ծառայութեան իրր փոխարինութիւն պիտի կրնան նիւթական վարձատրութիւն մը ստանալ գինեպան Գօ-չօյի մը եւ կամ Բագոսի համբաւեալ աշա-կերտէ մը:

Բայց այս ամէնքէն ետքը, քիչ մը հե-տաքրքրական պիտի չ'ըլլա՞ր գիտնալ թէ՛ ե՞ս ինչ կերպով կ'ըմբռնեմ ժամանցը:

Ապահովարար ո՛չ այս եւ ո՛չ ալ այն, չա՛տ տարբեր բան մը պիտի ըլլայ իմ այս առթիւ ընելիք յայտնութիւնս, եւ թերեւս ալ խիստ շատ զարմացնելու, ափ ի բերան ձգելու աստիճան տարօրինակ, բայց չէ՞ մի որ ճաշակները անվիճելի են բացարձակա-պէս:

Ամէն ատեն որ, տրամադրելի ժամեր ունենամ, առջեւս կ'առնեմ Չուհաեանին դեռ նոր հրապարակ հանած չարքիներու տետրակը — Պերկիւզարմը, որ իր մէջ բովանդակած եղանակներուն զանազանելու-թիւններովը չա՛տ հաճելի ու զուարթ ժա-մանց մը կ'առթէ ինծի, հաւատացէ՛ք, ա-ռանց այդ առթիւ սահած ժամերը ինծի զգացնել տալու:

Եւ արդէն երաժշտութիւնէ աւելի ինչ բան պիտի կրնար մեղմել քիչ մը մարդուս ձանձրոյթը:

Եւ պիտի փափաքէի որ ուրիշներ ալ, որոնք հաճոյքի զանազան տեսակէտներ կ'ո-րոնեն, հետեւէին ժամանցի այս իսկապէս օրինաւոր եւ փափաքելի ճամբուն, բան մը՝ որուն հետեւանքը կրկնակ օգուտներ առաջ պիտի բերէր, առաջին ո՛ր Գրիգոր Չուհա-եան իր Պերկիւզարմներուն սօսք սպա-ռելով իր քսակին ծաւալը պիտի լայնցնէր, թերեւս մինչեւ եէնի զաբուի ծովեզերքը... տուն մը շինելու աստիճան պարարտութեամբ, եւ յետոյ՝ ընթերցողները իրենք էին որ պիտի օգտուէին՝ օրին մէկն ալ Նօթայի եւ շարքիներու ուսումը աւելցած տեսնելով ի-րենց շուկայիկ գիտութիւններու պաշարին վրայ, եւ ասիկայ, ամենայն հաւանակա-նութեամբ:

Ահա՛ թէ՛ ինչպէս կարելի է ընել ժա-մանց մը, որուն ամէն անհատ ալ հաւա-նութիւն տայ, անշուշտ... Չուհաեանն ալ մէջն ըլլալով:

ԼԵՒՈՆ ԱՒԱԳԵԱՆ

Երկու բանասէրներու միջեւ.

— Ըսէ՛ նոյնիմ, Արշա՛կ, “մազա-պուր” բառը ուրկէ՞ կ'ելլէ:

— Մազէն եւ ապուրէն:

— Ինչէ՞ն գիտես:

— Որովհետեւ, կը պատասխանէ Արշակ, ռունգերը խոշորցնելով մե՛ծ հպարտութեամբ, ամէն անգամ որ ապուրիս մէջ մազ իյնայ՝ այդ բառը կը յիշեմ:

ՄԻԻՍԻԻՆ ԱԼԱՖՈՒԱՆԿԱ Է

(ԶԻՒՆԱԲԵՐ ՅՕԴՈՒԱԾ)

Շարժում, բնութեան ընծայած ձևերին հետ ուղեկող պաղունակ նիւթ մը՝ ֆոսֆոր, ֆոսֆոր, հրամցնել մեր ընթերցողներուն, պիտի ջանանք նկարագրել օրուան միւսին, եւ իր ալաֆուանկայութիւնը, յուսարով որ քիչ մը պիտի կրնանք զովացնել այն տաք մթնոլորտները, ուր պիտի կարդացուի մեր այս պաղունակ յօդուածը՝ Վալիւնակէն առաջ:

Յօդուածագրութիւնը, անանկ թար մը առաւ այս տարի, որ մինչեւ անգամ լորջ կարծուած, եւ նոյն իսկ պատկառելի համարուած զէմքերը մէկ մէկ դիմակով գրել փորձեցին, հոգ չէ թէ փորձանք եղան ընթերցողներու գլխուն, այնքան զրոյացան, հաւկիթցան, եւ կարելի է ամիս մը վերջ աւելցնենք ... խայտառակուեցան:

Բայց մեր նիւթը կազմող հերոսները, զրազեա դասակարգին հետ առնջութիւն մը չունին պէտք է ըսել, ասոնք, անոնք որ նկարագրելու եւ կամ վրանին խօսելու գործը զրոյցութիւնը պիտի ունենանք, մենք զրեւով՝ դուք կարդալով, Ազնիւ ընթերցողք, կը կազմեն այն դասակարգը, որոնք գաղիէրէնը գիրքերուն ձեւերէն կ'որոշեն, եւ ալաֆուանկա ըսուած սովորութիւն անկէ առկէ կընդօրինակեն, (կը կապկենք քիչ մը կծու պիտի փախեր հոս) Վիւսիւնիս ալաֆուանկայ է՝ կ'ըսեն, կը յօսորոտան այն տեսակ մայրեր՝ որոնք ֆանէլա բանթալօն կը հագնին, կունակնին խալիլու կը թխմեն ու պոծօրան ձեւքով կը կոծեն:

« Եղբայրս ալաֆուանկայ է » կ'ըսեն կը պարծին այն օրիորդները, որոնք ֆարուս միւս կը հագնին, եւ որոնց ֆէշի սերիսի սկառփինին քայօնները անպատճառ ծուռ կ'ըլլայ ...

Չեմ գիտեր թէ, ալաֆուանկայ եւ կամ ալաֆուանկայութիւն ըսելով ի՞նչ կը հասկընան, եւ կամ ի՞նչպէս կըմբռնեն այդ սովորութիւնը:

Քիչ մը վարը, ըստ կարելոյն պիտի նը-

կարագրենք, այդ կարգի ընտանիքի մը զաւակը, որուն ալաֆուանկայ ըլլալը ես չեմ հասկցած, կարելի է գերազնիւ ընթերցողներէս հասկցող ըլլայ, բան մը որ չեմ կարծեր, չեմ յուսար:

X

Միւսիւ Երուանդ, այս է անունը այն ինտելիգենտ Երիտասարդին՝ որ ըստ ինքեան, Որոմբսիոս աղայի մը եւ կիւլեանէ տուտուի մը հարազատը ըլլալու բազմն ու պատիւ ունի: Քսանին եւ քսան եւ հինգին մէջ տարուբեր, միջահասակ, յօֆանքա կառնօնի մաշերով, պէխերը նոր քրտնած, ինչպէս կ'ըսեն ժողովրդական լեզուաւ, ու նիքէլ ալնոցը քիթին: Մասնաւոր վարժարանի մը շրջանաւարտ, գիտէ քիչ մը գաղիւն, դոյզն ինչ հայերէն, եւ ունի հովիւր գիտակցութիւն 140,000 քաշ ութիւններու, որոնք երկարածիկ մաշերուն արմատներուն տակ կը կենան ... թռելու, ցնդելու կազմ ու պատրաստ:

Իր հմտութենէն, կարողութենէն աւելի հայրիկին նօհուս նօհուս արցունքներուն չընորհիւ է որ վաճառատան մը մէքիկը ըլլալու բազմն ունեցած է, որ թարգմանի կիրք-կեղ:

Ամուսկան ... ա՛, այս գաղտնիքը ինծի մի հարցնէք, որովհետեւ պէտք է աւելցնեմ հոս թէ՛ ամուսնացու տատրակ մը չէ ներկայացուցածս գերափալիւշուք մայրերու, այլ՝ կատարեալ հաւկիթ մը, որուն հատը ... 15 փարայ է կարծեմ այս օրերս:

Հիմա, տեսէք թէ այս եւ այս տեսակ հաւկիթաբարոյ միւսիւներու ձեւքէն ի՞նչ կը քաշեն խեղճ ծնողք:

X

Գիշեր է, ժամը երկուքը քիչ մըն ալ կ'անցնի:

Որոմբսիոս աղա, մամուկի պէս պատնի վեր նստած՝ համբիջին հատիկները կը համրէ, ու գէմը տիկին կիւլեանէ, ֆօթօկ-

ռափի օպէքթիֆին մէջ նայելու պէս՝ միւսիւ Երուանդին աչքը կը նայի... մինչ միւսիւ Երուանդի՝ օրուան լրագիրը ձեռքը, կազին մօտ բամպակին հրապարակը աչքէ կ'անցնէ:

— Քա ես վրում, օտքդ ծռիմ պագնեմ, աչքիս խաւերը կը դառնան կոր, ալթըն հաց ուտենք... կ'ըսէ մայրը լալկան դէմք մը շինելով:

— Պէ օղում, խա'ստ ունիս նէ ըսէ, աս վախիթ ի՞նչ տէյի պէքէյենք... խօսք կ'առնէ հայրը պեխերուն տակէն:

— Ո՛ւֆ... մի նեղէք զի՛ս... ալաֆրոնականին մէջ, երեքին կերակուր կ'ուտեն...

— Մօ տղայ, ի՞նչ տեղը կայ քի մինչեւ երեք նստիմ տէ սօղունճաններս ոտք հանեմ... ի՞նչ թէրթիպ է...

— Ո՛ւֆ... հէմ չէք հասկնար հէմ ալ դիտողութիւն կ'ընէք, պէտք է որ մարդ մինչեւ 2 1/2 - 3 լրագիր կարդայ, անկէ վերջը սեղան նստի... դեռ կէս ժամ ունինք ճաշի...

— Հասկցայ, կընիկ, դուն սըտեղէն ինծի քիչ մը զէթին հաց բեր տէ ներսիդիս խալաֆաթլամիշ ընեմ զէրէ աս տղան ալաֆրոնական է ըսելով իս խողը պիտի դնէ...

— Քա ճանըմ ես վրում, ֆարազա աս գիշեր ալ վախտովը կերակուրիս ուտէինք... հիշ կշտանալիքին ալ ալաֆրոնական չէի տեսէր, մեղայ...

Այսպէս բաւական խօսակցութենէ վերջ սեղանատունը կերթան եւ կսկսին ճաշել:

Ճաշեն վերջ, երբ Որոմբսիոս աղա, աթոռը ետի քշելով ելլելու պատրաստութիւն կը տեսնայ,

— Նստիս պիտի հայրիկ... ալաֆրոնականին մէջը, շուտով սեղանէն չեն ելլար...

— Էյ տղաս ցուրտ է օտան, ներսը տաք տեղը ձգենք հոս չիվի՞ պիտի կտրենք...

— Կաղաչեմ հայր... յարգեցէք քիչ մը ալաֆրոնական, կերակուրը ուտելէ վերջ գունէ կէս ժամ խօսակցելու է սեղանատունը...

— Պէ ես վրում... պաղը ճիշէրս կ'անցնի կոր... ի՛շ աղոթսի կըլլամ կոր...

— Քա ամա տղաս, կոնակս ի վար կիշնայ կոր, ձգէ տէ ներսի օտան երթանք...

կ'ըսէ մայրը, որ ուսերը վեր ահուաները իրար կը զարնէր...

— Քիչ մը ալաֆրոնականութիւն սովորեցէք, հիմա ամէն տուն ասանկ է... վարժուցէք, վարժուցէք...

— Գուզում կիլլանէ, թապալս մը տաքցու տէ փորիս դնենք, օլոր օլոր կուգամ կոր սանձիյէն... հէյ վար ասնէյ տա ալաֆրոնական տէ չի սովորէիր...

— Երկու երեք գիշեր նեղութիւն պիտի քաշէք հայր, վերջէն կը վարժուիք...

— Մօ ֆասուլեայ բաքիսի ուտելէն ետքը աս պաղ տեղը թիրիլ թիրիլ գալը ալաֆրոնական է... ատ տար մէռաք ունի՞ս նէ սօպա մը պեր տէ, ան ատենը չէքի կէս սահաթ՝ եաթախս պիլէ հոս կը փռեմ...

— Աստուծու սիրուն ես վրում ֆէրահաթ կուր սա մօտան տէ ներս երթանք, երեսիդ ըռէնիը նայէ, խունկ ես դարձեր... թիւյերըդ տնկուեր է...

— Հոգ չէ մայր, պէտք է ալաֆրոնական յարգել, գիտեմ թէ կը մտիմ կոր, բայց պառկած ատենս գաւաթ մը ըխլամուր կը խմեմ...

— Մօ, ինչո՞ւ փատնամ, ինչո՞ւ իլաճ առնեմ... ծօ ո՞ր շանն օսկորը իճատ հանեց տէ քեզի ալ սովորեցուց...

— Կ'աղաչեմ հայր, սըտեղը մէկ հատիկ զաւակնիդ եմ, քիչ մը խօսքս բռնեցէք, ի՞նչ կ'ըլլայ...

— Մօ, տիրի տիրի Որոմբսիոսը վրայ կ'երթայ կոր... ասոր տահան կայ... ըսելով ոտքի կ'ելլայ ու շունջը տաք սենեակը կ'առնէ, ուր կսկսի դողալ:

X

Ճաշեն վերջ Միւսիւ Երուանդ աճապարանօք,

— Շո՛ւտ, շո՛ւտ, հայրիկ, հագուէ...

— Մօ՛ ինչո՞ւ, ի՞նչ եղաւ... ո՞ր կերթանք կոր...

— Հիւր պիտի ունենանք, ալաֆրոնականին մէջը, պէտք է որ տնեցիք հագուին չքուին այնպէս ընդունին հիւրերը...

— Իշտէ քիւրքս կոնակս է, ո՞վ կուգնէ թող հրամմէ...

— Դուք ալ մայր, կոկուցէք, հիմա ուր են նէ կուգան . . .

— Մօ՛ եսփրուս, աս իրինկուն հարըդ ոտքերը ջուրը պիտի դնէր, նասըրին բէլինի եարուսի պիտի դնէինք, ես ալ հառտալ պիտի պտուտցունէի կոնակս տէ կանուխկէկ պիտի պառկէի . . .

— Ա՛ . . . նորէն խնդիր մի հանէք խնդրեմ . . . պէտք է յարգել ալաֆուանկան . . . , դուք հայր սեւ քօսթիւմինդ պէտք է հագնիք . . .

— Ինչո՞ւ, սգաւո՞ր են եկողները, անէքի սգաւոր են նէ ի՞նչ խաթ ուտելու տուն տուն վրիթայի կը պտըտին կոր . . .

— Ալաֆուանկային մէջ սեւ հագուստը, ձմրան էն պատշաճ քօսթիւմն է ընդունելութեան համար . . .

— Կետինին տիպը ասնի քեզի կուլտէ հանող տէ սէպէպ ըլլողը . . .

— Ըղըւ ըղըւ կայ հէմէն տէ վար ասնի, կը կրկնէ տիկին Կիւլիկ, ու այր եւ կին ի սէր իրենց մէկ հատիկին, կերած խմած կ'ելան հագուելու:

Ճիշդ ժամը չորսին՝ ինչպէս կը պահանջէ ալաֆուանկան, հիւրերը դուռը կը զարնեն, ու բոլորը մէկ վեր կ'ելան, ձեռքերին չփելով ձկնորսներու պէս: Հիւրերէն երկու կին բարեւելով ներկաները կանցնին կը նստին, մինչ երկու ծայրադոյն . . . ալաֆուանկա միւսիւնները, ժաքէթին վեր առնելով, ձեռքերին բանթոցներնուն գրպանը հակափորներին վառարանին կը դարձնեն կը կենան:

— Տղաս, միսաֆիրներուդ ըսէ քի նըստին . . .

— Ալաֆուանկա է սուտուս, առաջ աս պիչիմը կը տաքնան, ետքէն կը նստին . . .

— Էբէյիճէ թէրպիյէսիզ են եզեր . . . աւսիօ մը պիլէ չըրին . . . հէմ ալ գիտնալըս մայասըլ ունին զաւալլըները, նայէ տիպերնին կրակին տուին հէմէն . . .

— Սուս ճանըմ, ալաֆուանկայ է . . .

Քիչ մը վերջ բոլորն ալ կը նստին ու կըսկսին խօսակցութեան:

— Թամբէւաթիւաը բոլորովին փոխուեցաւ կարծեմ, խօսք կ'առնէ միւսիւններէն մին . . .

— Թամ հաւան է, թէւաթուռին, ամաս սխտորն ալ շըռթ կըռթ վեր կուգայ, իշտէ աս գէշ է . . . կը պատասխանէ տիկին Կիւլիկ . . . մինչ միւսիւ Երուանդ չրթունքը փրցնելու աստիճան կը խածնէ . . .

— Չեմ կրնար երեւակայել նմանօրինակ ցուրտ մը ձմեռնամուտէն ի վեր, առաջին անգամն է որ կզգամ . . .

— Էյ պէս պէլլի ձմեռ է . . . տոմոռօ հէլվասի չէ՞ եա . . . Թիթիւթէմէ կերտանլըիս պինէ պին պէշ եիւզէ կըսեննէ՞, իշտէ աս հաւաններն են . . .

— Կերակուրներու մասին, ինչպէս կանցնէք տիկին . . . խօսք կ'առնէ մետաքս պլուզով հիւրը, թեթեւ ժպիտ մը շինելով բուտապոտ բերնին երկու կողմը . . .

— Սանկ նանկ, իշտէ, նօհուտլու հառտալա կուտենք կոր, բուսապով միս, իշկէմ պէ չորպասի սըխտորլու . . .

— Մենք շիտակը շուարած մնացած ենք, քանի օր է փափաքեցանք ուլականջի խորոված պատրաստել, բայց . . .

— Ա՛ֆ կընէք տիկին, ո՞վ է խուլը, չի կրցի հասկնալու . . .

Երուանդ ընդմիջելով,

— Միտեային համար է տուտու . . . կ'ըսէ կաս կարմիր կտրած . . .

— Հա՛ սուս եղիր սուս, իմին ալ մէտէս միտեա տօլմասի մը ուզեց, բապուճի խրտար, նա՛ ամէն մէկը (ձեռքով կը ցուցնէ) օխտը խուռուշէն վար չի տուաւ սատկելիք հէրիֆը . . .

Երուանդ քանի կերթար կաս կապուտ կը կտրեր մօրը խօսուածքին ձեւին եւ ոճին համար:

— Իրաւունք ունիք տիկին, շատ անգամ ուլածնիս կարելի չըլլար գտնել երբէք, բայց ի՞նչ օգուտ, համակերպիլ պէտք է . . .

— Գիշերները ինտո՞ր կանցունէք կոր նայինք . . . կը հարցնէ Որոմբախոս աղա, խօսք մ'ալ ինք ըրած ըլլալու համար . . .

— Ընդհանրապէս բօֆեռ, միւզիֆ եւ ֆօնփեռասաիօն, կը պատասխանէ միւսիւն, որ խմած սիկառին մոխիրը միշտ գետինը կը թոթուէր . . .

— Էյ Երուանդ օղլում, թէրճիւմէ ըրէ նայինք, ի՞նչ ըսաւ միւսիւն . . .

— Թուղթ կը խաղան եղէր, մուգիգայ...
Խօսակցութիւն . . .

— Հա՛ . . . էյ աֆ կ'ընէք, չիմացած
օյիններս ըլլալու է քի չի կրցի հասկնալու,
կ'ըսէ Որոմբսիոս աղան, աչքովը կինը մօտը
կանչելով,

— Ինծի նայէ Կիւիւկ, իբրնճի սիկառան
ալ վառելու ըլլայ նէ . . . Թեւէն պոնելուս
պէս դուրս պիտի նետեմ . . .

— Սուս ճանճմ կեցիր նայինք . . .

— Նասը՛ կեցիր . . . տիւզէ կետնի
խալիին մէջը կը փսխէ կը ձգէ կոր վար . . .

Երուանդ կռահելով հօրը բարկութիւնը,
կը մօտենայ . . .

— Ինծի նայէ տղաս, միւսիւին առջին
թապա մը դիր, միւսիւրը կետինը կը նետէ
կոր . . .

— Ալաֆոռանկա է հայրիկ, սիկառային
միւսիւրը թըբ կ'ընեն գետինը կը նետեն . . .

— Տղաս, կուզեսնէ առ ալաֆոռանկայէն
վազ անցիր, զէրէ Որոմբսիոսին քէսէն ա-
աֆոռանկա չէ, խալի մընալ տեղը չեմ կըր-
նար զընէր . . .

— Սուս հայրիկ կիմանան, դուն նայէ
որ ինքզինքդ ալաֆոռանկա ծախես . . .

— Ծօ՛ տունս կը քրքրեն կոր . . . Փառ-
ղին չե՞ս երթար կոր . . .

— Այսպէս է հայրիկ, դուն ալ սովորէ որ
տեղ մը գտնուելու ըլլաս նէ նոյնը ընես . . .

Նոյն միջոցին հիւրերէն մին կնոջը քով
երթալով կսկսի կատակարանութիւններ ը-
նել եւ ի վերջոյ . . . շա՛ր . . .

Որոմբսիոս աղա չի կրնալով ինքզինքը
զսպել ոտքի կ'ելլայ ու կը պատրաստուի
սենեակէն դուրս ելլալ:

— Ո՛ւր հայրիկ, նստէ, իբրամ պիտի
հանենք . . .

— Օղլում, իբրամը հանեցինք տէ մէ-
զէն ալ կերան . . . հիմա ինչտար ծան ուս
նիմ նէ պոռամ պիտի . . . ամէն բանը ա-
լաֆոռանկա է բէք աղի՛կ . . . աս կէօզ կէօ-
րէ կնկանը . . . տէր ողորմեա՛յ . . .

— Հայրս, պէտք է գիտնաս որ, ծայ-
րագոյն ալաֆոռանկաի մէջ՝ այր եւ կին զի-
րար կրնան համբուրել . . .

— Տուններին ի՞նչ խալթ կ'ուզեն նէ ան

ուտեն, Որոմբսիոսին օտան թէատոօի չէնա
չէ . . . ալթըխ շատ կ'ըլլան կ'որ . . .

— Խնդրեմ հայր . . . ներեցէք, ինչպէս
ըսի պէտք է վարժուիք ալաֆոռանկային . . .

— Պակաս թող ըլլայ ատ պիչիմսիզու-
թիւնը, հէմ ինծի նայէ, ասկէ ետքը ասանկ
ուս տէրէճէ ալաֆոռանկա միսաֆիրները
տուն տալէթ մընէր օղլում, իշտէ քեզի
հօրենական խրատըս . . .

Մինչ այս մինչ այն, հիւրերը իրենք ի-
րենց բաւական տաք ժամանց մը ունենա-
լով կէս գիշերին կը մեկնին:

Երբ Որոմբսիոս աղա մինակ կը մնայ,

— Ծօ՛ տղայ, ի՞նչ տեղը կար քի ես
էնթարիս հանէի տէ ասանկ սրիսը սըլսը
հագուած նստէի մինչօք կէս գիշեր . . .

— Բա ետքում, ոս կետինները նայէ,
սաֆի մոխիր են ըրեր . . .

— Բայց ինչո՞ւ չէք հասկընար կոր խօս-
քըս . . . ալաֆոռանկայի մէջ ասանկ է, ա-
սիկայ աղեկ ըմբռնեցէք եւ դուք ալ վար-
ժուելու աշխատեցէք . . . կ'ըսէ Երուանդ
սրտնեղած:

— Նայէ քեզի ըսեմ, խօսք կ'առնէ Ո-
րոմբսիոս աղա, ալաֆոռանկա է ի՛նչ խառ-
նախսի է, ատ թէթիսը պոնել կ'ուզես նէ
փարա վաստըկէ, զատ տուն տեղ եղիր,
ինչ կ'ուզես նէ ան ըրէ, հէմ ընել տուր,
էյէր ատ ալաֆոռանկա ըսածդ, էրիկ կընիկ
ամէնուն մէջը շարուռ շուրուռ իրար պազ-
նել ըսել է նէ, իմ տունիս մէջը թօխում
մի ցանէք, ես չեմ կրնար խապուլ ընէր . . .
մէյ մը տահա ասանկ բան մը աչքիս իլիշ-
միշ ըլլայ նէ, բաշավալի պէս կը պոնեմ
դուրս կը նետեմ, գիտցած ըլլաս . . .

Այս կարճ եւ վճռական խրատականին
վրայ, բոլորն ալ իրենց սենեակը կը քաշ-
ուին, ու ծանրացող քունը լուռ հաշտարարը
կ'ըլլայ երկու հակառակ եզրերուն միջեւ:

×

Միւսիւ Երուանդը ալաֆոռանկա է կ'ըսեն
թաղին մէջ եւ ան աչքով կը նային իրեն:

Իրիկուն մը, միւսիւ Երուանդ ալաֆոռան-
կան, վիզիթի կ'երթայ տուն մը ճիշդ
ժամը չորսին, ըստ ալաֆոռանկային: Դուռը
հազիւ թէ զարկած թէ չէ, սենեկին լուսը՝

բուֆ կը մարի, ու դուռը մեղմիկ բացուե-
լուն, գիշերնոցով տանը աղան կը ներկայա-
նայ իրեն:

— Ը՛... բարի իրինկուն տիար...
ը՛... կարծեմ՛...:

— Ասծու բարին օղլում... կարծիքդ
չիտակ է, պառկել կելանք կոր...:

— Բա՛յց... դեռ ժամը չորսն է...
կրնայիք մի քիչ... ը՛... այո՛... բա՛յց...:

— Հա ա՛մա ես վրում, մենք ասանկ կա-
նուխ կը պառկինք... սահաթը չորսն է...:

— Օրիորդներն ալ այս ժամանակ կը
պառկին... ը՛... բա՛յց...:

— Հրամմերէս, անոնք ալ աս վախիթ
թառը կելան... կալու միաք ունենաս
նէ՛ քիչ մը վախտովը տավանմիշ եղիր...
գիշեր բարի օղլում... պապայիդ բարեւ
ըրէ... ըսելով դուռը կը գոցէ, փողոցին
մութին մէջ ձգելով միւսիւ Երուանդ ալա-
ֆրոանկաեանը, որ կանթերը ձեռքը կըս-
տիպուի տուն դառնալ... ալաֆրոանկա քայ-
լերով:

X

Անձրեւ օր մը, փողոցին երկայնքէն եր-
կու աղջիկ, առանց հովանոցի շտապաւ ի-
րենց տունը հասնելու կը ջանային, երբ
միւսիւ Երուանդ ալաֆրոանկաեան իրենց կը
հանդիպի:

— Ներեցէք օրիորդներ, կընդունի՞ք թե-
ւըս մինչեւ տուն...:

— Օ՛... չնորհակալ ենք, բա՛յց...:

— Խնդրեմ հաճեցէք ընդունիլ առաջար-
կըս, հովանոցս կրնայ մեզ երեքնիս պատըս-
պարել:

Ու ալաֆրոանկա միւսիւն իրեն բոլորովին
անծանօթ օրիորդները թեւը զարկած կսկսի
յառաջանալ:

Նոյն պահուն օրիորդներու հայրը դէ-
մերին ելլալով:

— Միւսիւ, նասըլ աս որ թամ ավի հա-
վա է հէ՛...:

— Ներեցէք Տիար, զՁեզ ճանչնալու
պատիւը կրնա՞մ ունենալ...:

— Աղջիկները ճանչնալու պատիւը կ'ու-
նենաս կոր տէ, հարերնին նամուսի՞դ կը
դպչի կոր... վար ձգէ նայիմ սուռնք...:

— Բա՛յց... խնդրեմ... յանուն ա-
լաֆրոանկային ուզեցի առանց թրջելու ի-
րենց տեղը յանձնել օրիորդները...:

— Վար ձգէ կ'ըսեմ կոր, հիմա լայնելը
քէօթէկ մը կը քաշեմ տէ կը տեսնաս ալա-
ֆրոանկան... էտէպիզուութեան, սըյը-
խութեան անունը ալաֆրոանկա մըն է կը
փակցունեն կոր... ծօ՛, քեզի ի՞նչ ֆարզ,
էլ ալէմին աղջիկները խօթուխդ զարնես
սօխախ սօխախ պտըտցունես...:

— Հայրիկ... միւսիւ Երուանդը ճանչ-
նալու ես, ըսածը չիտակ է, ալաֆրոանկա-
յին մէջը, երբ առանց հովանոցի կին մը
կամ աղջիկ մը տեսնան, պէտք է անոր ըն-
կերանուն մինչեւ տուն... կ'ըսէ օրիորդ-
ներէն մին հօրը ականջն ի վար:

— Ալաֆրոանկա միւսիւն, ալաֆրոանկա
աղջիկ մը տեսնայ նէ անիկայ թող խօթու-
խը զարնէ... չէնէ անանկ օլուր օլմազի
աղջիկը եանդըն խուլսիի սէքէթի պէս եր-
կու քովէն կախելու ըլլայ նէ, իրեն ալա-
ֆրոանկայութիւնը թէօպէ ընել կուտան մար-
դուն: Տէ քալեցէք նայիմ...:

— Ներողութիւն միւսիւ Երուանդ...:

— Կը ներէք միւսիւ Երուանդ...:

— Ծեծ չի կերած առ քսլէ միւ-
սիւ, չիւնքիւ գիտնալըս ալաֆրոանկային
մէջը եօւմուլիս իքում մըն ալ կայ...:

X

Միւսիւ Երուանդի պէս հաւկթարարոյ-
ներ ցաւալի է ըսել թէ՛ չեն պակսիր մեր
մէջ: Թերեւս Տարուին՝ առաջին մրձանակը
տար իրենց, Նկատելով որ կապկութիւնը
կատարեւագործելու մէջ ջանք չեն խնայէր
անոնք: Հինգ մատ օձիք դնելով, ձեռքեր-
նին իրար չփելով, երկու բառ գտղիներէն
խօսելով, սրածայր պօթեր հագնելով, պե-
խերնին վեր ոլորելով, մագերնին վեր սանտ-
րելով, ինքզինքնին աշափոսանկալին մարմնա-
ցումը կը հոչակեն, եւ միշտ արդիւնքը սա
կ'ըլլայ որ՝ անձնիւր գիտակցութիւն ունե-
ցող եւ ընտանեկան պատիւը պաշտպանող
տանուտէր հայրեր՝ զանոնք կը ջանջալսեն,
կայպանեն եւ կը խայտառակեն:

Մաքրութիւնը, կոկիկութիւնը եւ պատ-
շաճութիւնը կը հասկընամ, բայց երեք ու
կէս զրուշով, ու ետնալը բանթալօնով ալա-
ֆրոանկայութիւնը... ոչ երբէք:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

3. ԱԼՓԻԱՐԻՆ

Պարոնեանի կարծեցեալ յաջորդ (.) Իգլիսի գրական (.) շաբաթաթերթին վերջին թուոյն մէջ կարճ մը միամիտ լռոյններ կը կարդայ մեզի, հաւատացնել ջանալու համար թէ՛ իր «Գրագէտի տուայտանք» ծանօթ յօդուածը բանագողութիւն մը չէր Matinի գումարթ քրօնիկագիրն H. Harduinի մէկ գրածին, ու ամենայն փութկոտութեամբ կը հրաւիրէ (.) զիս եւ թէ հանդէսին պատ. խմբագրութիւնը, որն է Harduinի մը հեղինակութիւնը մէջտեղ դնել եւ ապացուցանել իր յօդուածին անկէ առնուած ըլլալը, եւ եթէ ապացուցանե՞նք. գիտե՞ք ինչ կը խօստանայ մեր սրամիտ.՝ երգիծաբանը հրապարակաւ . . . ՀԱՐԻԻՐ ՖՐԱՆՔԻ գումար մը նուիրել Ազգ. Հիւանդանոցին իբրեւ պատիժ իր գործած յանցանքին . . . :

Այս որքա՞ն բարձր են կը թուիս սիրելիս, 100 Ֆրանքի գումար մը նուէր հէ՛ . . . գոնէ քիչ գրէիր սաւեիկայ, որուն թերեւս մասամբ մը հաւատայինք, բայց Ֆրա՞նք . . . Լեռներ ձորեր կան ձեր երկուքին միջեւ, ո՛վ իմին մինիոն Արփարս, ամէնուն լօջ, մեզի՞ ալ լօջ . . . :

Սակայն կատակը մէկ կողմ, հիմայ մենք մեզի ենք, դուն որ անզուգական եւ չնաշխարհիկ դէմք մըն ես մեր մէջ, դուն որ կոչուած ես «Մամուլ»ին զարդը. ու մեր գրականութեան ջահը, այդ խոշոր մարտավաշտը գրած պահուդ, բնաւ միաքիչ չի բերի՞ր անոնք, որոնք կրնային հետեւեալ օր քուքղայի պէս օձիքիդ բակչիլ . . . այդ 100 Ֆրանքի գումարեն իրենք ալ բաժին առնելու համար . . . Մե՛ղք որ խորհած չունիս այդպիսի բաներու վրայ, ասոնցմէ տուժողը դուն կըլլաս նորէն. ինքզինքդ կալանքով ցուցնել աշխատած պահուդ: Սակայն կը տեսնեմ որ երկու խօսք ընելու պահուս հազար խօսքը իրար խառնեցի, եւ չի կրցայ ըսել քեզի քու ուզած հարցումդ ով իմ սիրելի բարեկամս Մ. Ալփար: Քանի որ կուզես եւ այնքան փա-

փաքող ես բանագողութեանդ բնագիրը գիտնալու, առ քեզի ուզածդ, պայմանաւ սակայն որ ետքեն չելլես սրդողիս ինծի, որովհետեւ, դուն քու յօժար փափաքովդ կուզես որ այս վերջին անգթութիւնն ալ գործեմ, եւ փակեմ վարագոյրը այս վերջին արարին վրայ, ուրկէ բաւական զուարճացան «Հանրագիտակ»ի բազմաթիւ սիրելի ընթերցողներս . . . :

Ուրեմն եկուր կամաց մը ականջդ ի վար փափամ, առանց լսուելու «Հանրագիտակ»ի ընթերցողներուն կողմէն.

ՏԵՍ MATIN ՀՈՒՏ. 18 - 22 ԹԻԻԸ

ուր առաջին երես երրորդ սիւնակին մէջ պիտի գտնես ՓՆՏՈՒՄ Բանագողած յօդուածդ:

Հիմակուց տեսարանը առջեւ է, երբ այս տողերս պիտի կարդաս: Կուզէի այդ վիճակդ ծակէ մը դիտել. եւ շինած սուրաքող, որ տեսնելու համար սիրայօժար մէկ մէկ քարտունեց պիտի ընծայեն իմ ազուոր կարդացողներս . . . :

Իսկ գալով 100 Ֆրանքին զոր պիտի վճարես, կրկին քեզ կը նուիրեմ . . . :

Կը տեսնե՞ս, կը սիրեմ ու կը մեղքնամքեզի կրկին . . . :

ՍՏԵՓԱՆ ԵՐԿԱՆԵԱՆ

ԴԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1805

Կ. Պոլիս, Լեռնան փողոց, թիւ 57

Օսմանեան Պատմութիւն մինչեւ մեր օրերը Մ. Աշէեան Ղրշ. 4

Գոհարմասեանի, երկսեւ վարժարաններու ուսանողներու ընթերցման արժանի լաւագոյն դասագիրքը Ղրշ. 5

Զրուցասրահան Ընթերցարան. տարրական կարգերու. իր տեսակին մէջ բոլորովին նոր Ղրշ. 3

Մանկավարժական Քերականութիւն. Գ. մաս. պատկերներու վրայ իր աննման ոճովը կը սորվեցնէ Հայերէն Քերականութիւնը Ղրշ. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրաբարի, կ'ուսուցանէ գրաբարը հասկնալ ու թարգմանել, առանց հոլովները ու բայերը ի բերան սովորեցնելու: Ղրշ. 4

ԼՈՒՍԱՆԿԱՐԳ

Լուսանկարդ խոթիս ու վեհ կեցութեամբ,
Ձոր դուն ինձի նուիրեցիր անցեալ օր,
Արդ ձեռքիս մեջ զանի սեղմած՝ հոգեթով
Քեզ կ'երագեմ այրած արտով վիրաւոր:

Խոթիս ու վեհ հասակդ հոգեւոր նոսրեման,
Ու շանջրի սեղմ, կուրծքդ շեցուն ձեռաւոր
Ո՛հ, կը փայլին, ու ակնարկդ ալ մոգական,
Կը գրաւէ՝ Պրոէս արեւն ու բոլոր՝...

Շրջագգես մը վայրուջ, ձերմակ ձիւնեղեն,
Ու մուշիկն պուզդ աղուր կիսաքաց,
Երանգ մը նուրբ տուած եմ քեզ հրեղեն...
Հրեշտակի՛, բոցի՛, հուրի՛, երկնի կայծ:

Ժպտակն մը ձերմակ ազնիւ քաւիշէ,
Ոսկի փայլուն մագերուդ վրայ բոցոսած
Կ'աշխարհի, լուռ կը ննջէ՛, կը յիշէ՛
Քննոյ՜ մասներն աղուոր կոյսին ամօրիսած:

Ապարանջան մը քանկազին մարգարէ,
Վրձիս, շեցուն քելիդ վրայ հոլանի,
Կը փայլիլդի ու զանակներ կը կարէ,
Ուր նայուածքս հիմա ի զո՛ւր տեսանի:

Թաւիշ այտերդ որքա՛ն երանգ եմ առեր,
Շրթունքներդ ալ զոգցես քուեր եմ անգոյր,
Որով կ'իրեմս՝ մարած, սրմած, անտարբեր
Կ'արթնցընեն, ու կը գողնան մ'ի համբոյր:

Բայց արդ կ'զգամ քե կը սիրեմ ես զքեզ.
Ծանօթութիւնն ձգե՛մ մեկդի ու հեռի,
Երիտասարդ հոգիս արդեւ սիրակեզ,
Քու շրթներուդ կարօտն ունի՝ ո՛վ հուրի...:

... Բայց սկսեալ տուր ինձի, գիտե՛մ, զայն,
Որովնեք չեմք սիրեր դեռ իրար,
Գիտե՛մ, հիմա կը փրքուես ընդ ունայն՝
Լուսանկարդ գոր ինձ տուր, ահա՛, առ...:

Բեյլա

ՍՈՎԵՏԱՅԱՐԱՑՆԵՐ



ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

13 Թիւր

Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ 13 Թիւր
աղետալի համարուած է, այն աստիճան որ
հացկերոյթի մը հրաւիրուածներուն բացա-
կայելովը երբ անոր Թիւր 13ի հասնի՝ փու-
թով կամ մէկն ալ կը պակսեցնեն ճաշի մաս-
նակցութենէն, եւ կամ ուրիշ մը կը գտնան
սեղանակիցներուն Թիւր 14ի բարձրացնելու
համար:

Վերջերս Նիւ-Եօրքի դատարաններէն մէ-
կին մէջ, գողութիւնով եւ վիրաւորումով
ամբաստանուած՝ Թօմաս Պուքլի անուն մարդ
մը դատուելով՝ 13 տարի բանտարկութեան
դատապարտուած էր: Վճիռը ամբաստան-
եալին հաղորդելէ յետոյ, դատարանին նա-
խագահը ամբաստանեալին վերջին ըսելիք-
ները հարցուց:

Ամբաստանեալը պատասխանեց:

— Դատաւորներէս կը խնդրեմ որ բան-
տարկութեանս պայմանաժամը փոխեն: 13
Թիւն չաօ կը վախճամ, ուստի դատա-
պարտութեանս 13 տարին զիս անբացառ-
ելի յուզումի մը կը մատնէ: Ես չեմ փա-
փաքիր որ այդ Թիւն զեղջում մը ըլլայ,
այլ կը խնդրեմ որ 13ը 14ի բարձրացնելով՝
զիս աղետալի երկիւղէ մը փրկելու շնորհը
ըրէք:

Ասոր վրայ Դատական Մարմինը երկար
խորհրդակցութենէ մը վերջ, ցաւ յայտնե-
լով յայտարարեց թէ չը պիտի կրնար այդ
վճիռը փոխուիլ՝ քանի որ Օրէնքը 13 տարի
միայն կը տրամադրէ, ատկէ ուրիշ պատիժ
մը տալ անարդարութիւն պիտի ըլլար:

ՁԵԿՈՅՑ

Կը խնդրուի Հանրագիտակի բաժանոր-
դութենէ հաշիւ ունեցողներէ

ՎՃարել անյապաղ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Կ'իմանանք թէ ծովեզերեայ թաղի մը Պատ. Թաղական խորհրդոյ անդամներէն մին, նրկատելով որ իր տանը պարտէյը նեղ կուգայ հաւերը պարբերակելու, ատենէ մը ի վեր եկեղեցւոյ բակին մէկ անկիւնը տարած հաստատած է զանոնք: (Խեղացի կարգադրութիւն, ո՞վ ինչ կրնայ ըսել . . . Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Շաբթուս տեղացող ձիւնէն հրճուող մանկամարդ տիկին մը անցեալ իրինկուն ուշ ատեն պօնանառչէն դարձին թօզաթլեանի մօտ ծանր արկած մը կանցնէ, վտանգաւոր կերպով սահելով . . . միւսիւի մը բազուկներուն մէջ: (Ձենք գիտեր թէ այս պատահարին « անցեալ ըլլայ » պէտք է ըսել թէ « նորէն ըլլայ » Ծ. Խ.):

ՍԿԻՏԱՐ. — Մեր մասնաւոր թըղթակցէն կը տեղեկանանք թէ՛ անցեալ գիշեր պատահած հրդեհին մինչ Աճի պատէմի տունուորները իրենց կահկարասին կը ժողուլտէին՝ նոյն թաղէն կին մը սկամպիլին թուղթերը ձեռքը « Ասօ, իքիլի իմ քովս է, խաբութեղաք » ըսելով պարտեր է փողոցին երկայնքը:

ՆՈՅՆ. — Կ'իմանանք թէ բարեպաշտ ժողովուրդին կողմէ քահանաներու տուփիկը ձգուած սրտաբուլիս նուէրները շատ գոհացուցիչ չեն նկատուեր այս օրերս, որուն համար կարգ մը շնորհունակներ այս երկար գիշերները ծանրածանր մտմտութեով անցընելու վրայ են: (Սնուշ գինի վրայէն. Ծ. Խ.):

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Ալաֆուանկա է ըսելով անցեալ կիրակի թեթեւ քոս-

գիւմներով պտոյտի ելլող շարի մը օրիորդներ մեծաշողջողալուք էնֆիլէնցային կ'աշակերտին այս օրերս: Ձենք գիտեր թէ նորաձեւութիւնը ջատագովող . . . յարգելի միւսիւն ինչո՞ւ նիւթ չառներ այս էական պարագան: (Այո՛, ինչո՞ւ, ո՞հ . . . ինչո՞ւ արդեօք . . . Ծ. Խ.):

ՍԱՄՍՈՆ. — Թերթիս նախորդ գործակալ Պր. Յ. Տ. թէեւ կըթական գործերու պատճառաւ երկու տարիէ ի վեր մեր հաշիւը չեր կրցած կարգադրել, կը խոստանայ այդ գումարը ամբողջովին ղրկել մեզ յամի Տեառն . . .

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Այս տարի սկումբի ձուկը առատ չըլլալուն հոս բուռնապի առեւտուրը շատ աննշան եղած է: Շատ կիներ մաճառի ալուր գործածելու վրայ են:

ԲԵՐԱ. — Անցեալ գիշեր ընտանիքի հայր մը, երբ մինչեւ ժամը 3ին մօտերը նստած ի հեճուկս Թաւշանճեանին ալքօլը կը ջատագովէր գործնականապէս, Քառագիւղ մանթօով տիկինը ականջէն բռնելով դուրս հանեց ամուսինը, խլացուցիչ գահգահներու մատներով ներկաները:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Վերջին պահուն օրաթերթերու և շաբաթաթերթի մը մէջ « Հանրագիտակ » ը բերնի ծամոց ըլլալուն, կը խնդրենք մեր գերազնիւ ընթերցողներէն, սպասել մեր յաջորդ թիւին, ուր խմբագրականով մը մերկապարանոց պիտի բացատրենք մեր կարծիքը, եղած գրական անգոյն լղրճուկութիւններուն մասին:

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտոսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍԵՈՒՆԴ

ՓՈՒՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ սննդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պալիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և զնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճարոնի և Չինու համաբաւար թիշիներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, քաղցութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջլային ակարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Թամսեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով: 50—20

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՊԵՐՁԵԼԻՆԱՅ

Արանց, Կանադայի և Տիպոյոյ
ՊԻՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և ընկ.

Կ. Պոլիս, Սուրբ Զատնի, Թոփաքանի խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, քաղաքացիական և զինեւորական անմիջական աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմար, յաճախորդաց վստահութիւնը: Այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուադէպներու, կանանց բեղուններու և տղայոց շիք և դիմացկուն խորհրդներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուադէպ և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին: 50—15

Հ. ԵՄԱՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵՄԱՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ԵՒ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօղի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստունի արանց, կանանց և տղայաց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահկարասի, ձեղունի լամպարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, խկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղը

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-11

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։